

յերու պարտէզներն ու այգիները ու սկսէր գաղթականութիւնը: (*)

ՕՍՄԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ

ԹԻԻՐՔ, ՔԻԻՐՊ, ԵՒ ՀԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

(Քիւրդ եւ Հայ լեռնականները. Հայ գաղթականութիւններու անեցականութիւնը. Օսմ. պետութեան ասիականական գերակշռութիւնը. Հայերու դէպ ի քաղաքակրթութիւն ձգտումը. Քաղաքական արքեր դրութիւն քաղաքներու եւ գիւղերու միջեւ. Քրիստոնէայ Հայ—Պատրիարքութիւն եւ Մանսեական Շրխութիւն. Տնտեսական ու քաղաքակրթական վիճակներու արքերութեամբ Հայերը կը դիմեն բարեկարգութեան, Քիւրդերը անկախութեան.)

Ակնարկը որ պիտի ձգենք քիւրդական տիրապետող իշխանութեանց վերջնական կործանումէն մինչև մեր օրերը, մեզ կը թելադրէ այդ ժամանակամիջոցը բաժնել չորս շրջաններու.

(*) Հայ հասարակ գիւղացին քիւրդ հարստահարող պէյերու, աղաներու ձեռքէն ազատուելու համար, մինչև հիմա ալ Օսմ. կառավարութեան պաշտպանութիւնը խնդրելու ու անոր հասցնելու համար իր վերջին բողոքը, վերջին միջոցը նկատած է գաղթելու. Անճարութենէն զատ, հինէն մնացած սովորութիւն մ'է (թէև այժմ դատապարտելի). այդ ժամանակները Օսմ. կառավարութիւնը հողածութեամբ եւ թէ ստիպուած՝ կ'ուզէր որ ժողովուրդը հողին վրայ մնայ, արդիւնաբերէ, տուրք վճարէ և Օսմ. իշխանութեան նեցուկը դառնայ, աւազակ և ըմբոս տարրերու մէջ Օսմ. կառավարութեան գոյութիւնը ներկայացնելով: Ազոր համար էր որ գաղթականութիւնը բառը լսելուն ու աղոր դործնական դիմումը տեսնելուն պէս՝ կառավարութիւնը կը դիմէր կարուկ միջոցներու: Այժմ գաղթականութեան հարցը փոխած է իր կերպարանը: